Ծանուցում «ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ-ի կողմից հաճախորդի անձնական տվյալների մշակման վերաբերյալ	**ARMBROK OJSC notice on processing the personal data of client**
Ղեկավարվելով «Անձնական տվյալների պաշտպանության» մասին ՀՀ օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 14-րդ, 13-րդ, 19-րդ հոդվածներով և «**ԱՐՄԲՐՈԿ**» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») հաշվի բացման հայտում հաճախորդի (այսուհետ՝ «Հաճախորդ) կողմից տրված համաձայնության, հաշվի առնելով, որ.	Guided by Articles 8, 9,10, 13, 14 and 19 of the RA Law “On Protection of Personal Data”, and by the consent given by the Company's client (hereinafter referred to as the "Client") in the application for opening an account of **"ARMBROK"** Open Joint Stock Company (hereinafter referred to as the "Company") considering that:
Հաճախորդը գիտակցում է անձնական տվյալների պաշտպանության կարևորությունը և դրանց օգտագործման թափանցիկության ապահովումը:	The Client acknowledges the significance of preserving personal data and ensuring transparency in its utilization.
Ընկերության կողմից ներդրումային ծառայություններ մատուցելիս Հաճախորդի անձնական տվյալների հավաքագրման անհրաժեշտությունից ելնելով անհրաժեշտ է ստանալ Հաճախորդների համաձայնությունը վերջիններիս անձնական տվյալները օգտագործելու համար:	When providing investment services by the Company, based on the need to collect the Client's personal data, it is necessary to obtain the Client's consent to use the latter's personal data.
Հաճախորդի տվյալները օգտագործվում են ներդրումային ծառայություններ մատուցելու համար այդ թվում արժեթղթերի և/կամ բրոքերային հաշվի բացման և պահպանվում թղթային կամ էլեկտրոնային բազայում և բանկերի, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ Կենտրոնական Դեպոզիարիայի կամ այլ երկրների դեպոզիտարիաների պահանջով հաճախորդներին ներդրումային ծառայություններ մատուցելու նպատակով կարող են փոխանցվել նրանց:	The Client's data is used in the paper or electronic database of securities and/or brokerage account opening and may be transferred to banks, RA Central Bank, RA Central Depository or depositories of other countries for the purpose of providing investment services to Clients.
Իր գործունեությունն իրականացնելիս Ընկերությունն համագործակցում է ՀՀ բանկերի, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ կենտրոնական դեպոզիտարիայի, ներդրումային ծառայություններ մատուցող այլ ընկերությունների հետ և, անհրաժեշտությունից ելնելով, կարող է վերջիններիս փոխանցել իր Հաճախորդների անձնական տվյալները և այդ տվյալները մասնակի և/կամ ամբողջությամբ մշակելու իրավասությունը:	In carrying out its activities, the Company cooperates with RA banks, the RA Central Bank, the RA Central Depository, other companies providing investment services and, based on the need, may transfer to the latter the personal data of its Clients and the right to partially and/or fully process such data.

սույնով Ընկերությունը Հաճախորդին տեղեկացնում է, որ	the Company hereby informs the Client that:
1. նրա անձնական տվյալներն, այդ թվում՝ անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան տարեթիվ, անձնագրում առկա տվյալները, կոնտակտային տվայլները, պաշտոնը, մասնագիտական գործունության վերաբերյալ տվյալները, ինչպես նաև ցանկացած այլ տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել նրա ինքնությունը, ենթակա են մշակման ինչպես Ընկերության կողմից, այնպես էլ Ընկերության հետ համագործակցող ընկերությունների կողմից;	1. her/his personal data, including the name, surname, patronymic, date of birth, information in passport, contact information, job title, and brief professional biography, well as any other information that will enable or may enable directly or indirectly identify his/her identity, shall be subject to processing both by the Company as well as by companies cooperating with the Company;
2. Ընկերությունը կարող է օգտագործել Հաճախորդի անձնական տվյալները մինչ այս նկարագրված նպատակներով;	2. The Company may use the Client's personal data for the purposes described above;
3. Ընկերությունը պարտավորվում է Հաճախորդի հետ գործարար հարաբերությունների ընթացքում. • ձեռնարկել համապատասխան միջոցներ Հաճախորդների անձնական տվյալները չարտոնված մուտքից, կորստից կամ սխալ օգտագործումից պաշտպանելու համար: • Տվյալների բազային հասանելիություն ունեցող Ընկերության աշխատողների և այլ անձանց հետ կնքել գաղտնիության պահպանման համաձայնագրեր:	3. During business relations with the Client the Company undertakes to; • take appropriate measures to protect Clients' personal data from unauthorized access, loss, or misuse. • Enter into confidentiality agreements with employees and other persons of the Company who has access to the database.
4. Ընկերությունը պարտավորվում է անհապաղ տեղեկացնել Հաճախորդին տվյալների բազայից տեղեկությունների արտահոսքի մասին և ձեռնարկել անհապաղ և անհրաժեշտ գործողությունները հնարավոր բացասական հետևանքները նվազեցնելու համար: Սույն կետով սահմանված պարտավորության չկատարման պարագայում Ընկերությունը կրում է դրա արդյունքում առաջացած բոլոր բացասական հետևանքները, այդ թվում, սակայն չսահմանափակվելով, Հաճախորդի կողմից ներկայացված ցանկացած օրինական պահանջի հետևանքով ծագած քաղաքացիական, վարչական կամ այլ տեսակի պատասխանատվությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ արտահոսքը տեղի է ունեցել, Ընկերության վերահսկողությունից	4. The Company undertakes to immediately notify the Client about the leakage of information from the database and take immediate and necessary actions to reduce possible negative consequences. In case of non-fulfillment of the obligation established by this paragraph, the Company bears all the negative consequences resulting from this, including, but not limited to, civil, administrative or other liability arising from any legitimate claim made by the information provider, except in cases where a leak occurred as a result of actions beyond the control of the recipient of the information and/or as a result.

դուրս գտնվող գործողությունների հետևանքով և/կամ արդյունքում:	
5. Անձնական տվյալների ուղղումը, ոչնչացումը, տվյալների մշակման դադարեցումը կամ այլ գործողությունները կատարվում են «Անձնական տվյալների պաշտպանության» մասին ՀՀ օրենքով սահմանված պահանջների համաձայն:	5. Amendments, destruction of data, as well as termination of data processing or other activities shall be made in accordance with the requirements of the RA Law “On Protection of Personal Data”.
6. Անձնական տվյալների մշակման պայմանները համապատասխանում են «Անձնական տվյալների պաշտպանության» մասին ՀՀ օրենքով սահմանված պահանջներին:	6. The conditions of personal data processing comply with the requirements established by the RA Law “On Personal Data Protection”.